Գիտե՞ս, որ...

Ինչպես դիմել «Այլընտրանքային ծառայության»

«Այլընտրանքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և սույն կարգի համաձայն, քաղաքացին մինչև հերթական զորակոչին նախորդող ամսվա 1-ը դիմում է ներկայացնում այն զինվորական կոմիսարիատ, որտեղ նա հաշվառված է: Դիմումի մեջ պետք է նշված լինեն այն ներկայացնելու ամիսը, ամսաթիվը, տարեթիվը, քաղաքացու ստորագրությունը, բնակության վայրի հասցեն:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2008թ. ապրիլի 1-ից «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպությունն իրականացնում է «ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՁԵՒԱՎՈՐՈՒՄԸ ԶՈՐԱԿՈՉԻ ՆԿԱՏՄԱՄԲ» ծրագիրը:

Ծրագրի շրջանակներում զորակոչիկներին կտրամադրվի անվճար իրավաբանական խորհրդատվություն: Խորհրդատվության համար կարող եք դիմել Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ:

Հասցեն՝

ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 59,

հեռ. (0322) 4 22 68 կամ 091 200971, 093 820632

Էլ. հասցե՝ hcav@hcav.am; asakunts@hcav.am

Ինտերնետային էջ՝ http://www.hcav.am
http://www.hrlori.am

Վանաձոր 2008

Զորակոչի՞կ, իմացիր քո իրավունքները

Տեղեկատվական թերթիկը պատրաստվել է «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ-ի կողմից Բաց Հասարակության Ինստիտուտի աջակցության հիմնադրամ -Հայաստանի գրասենյակի ֆինանսական օժանդակությամբ իրականացվող «ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՁԵՒԱՎՈՐՈՒՄԸ ԶՈՐԱԿՈՉԻ ՆԿԱՏՄԱՄԲ» ծրագրի շրջանակներում



Ովքեր են զորակոչվում պարտադիր զինվորական ծառայության

Պարտադիր զինվորական ծառայության են զորակոչվում 18-ից մինչեւ 27 տարեկան արական սեռի զորակոչիկներն ու առաջին խմբի պահեստազորի սպաները, ովքեր առողջական վիճակի պատճառով ճանաչվել են զինծառայության համար պիտանի՝ խաղաղ պայմաններում:

Ովքեր են համարվում զորակոչիկ

Զորակոչիկ է համարվում պարտադիր զինվորական ծառայության զորակոչված 18-ից մինչեւ 27 տարեկան արական սեռի այն ներկայացուցիչը, ով առողջական վիճակի պատճառով ճանաչվել է զինծառայության համար պիտանի՝ խաղաղ պայմաններում:

Ինչ է զինվորական հաշվառումը եւ ում կողմից է այն իրականացվում

Նախազորակոչիկների զինվորական հաշվառումը համարվում է կցագրում: Կցագրման ենթակա են 16 տարին լրացած արական սեռի քաղաքացիները: Կցագրումը կատարում են զինվորական կոմիսարիատների հանձնաժողովները՝ ընթացիկ տարվա հունվար-մայիս ամիսներին:

- Զինապարտների զինվորական հաշվառումը կատարում են նրանց բնակության վայրի զինվորական կոմիսարիատները:

- Արտասահմանում բնակվող (մեկ ամսից ավելի) զինապարտների զինվորական հաշվառումը կատարում են դիվանագիտական եւ հյուպատոսական մարմինները:

- Աշխատող եւ սովորող զինապարտների զինվորական հաշվառումը կատարվում է նաեւ ձեռնարկություններում, հիմնարկներում, կազմակերպություններում եւ ուսումնական հաստատություններում:

- Քաղաքացիները պարտավոր են զինվորական հաշվառման համար ներկայանալ իրենց բնակության վայրի զինվորական կոմիսարիատ (դիվանագիտական, հյուպատոսական մարմիններ):

- Բնակության վայրը փոխելու դեպքում զինապարտները զինվորական հաշվառման կանգնելու համար պարտավոր են ներկայանալ համապատասխան զինվորական կոմիսարիատ (դիվանագիտական, հյուպատոսական մարմիններ)՝ զինվորական հաշվառումից դուրս գալուց եւ բնակության նոր վայր ժամանելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

Ովքեր ենթակա չեն զորակոչվելու պարտադիր զինվորական ծառայության

Պարտադիր զինվորական ծառայության զորակոչվելու ենթակա չեն այն անձինք, որոնց նկատմամբ կատարվում է նախաքննություն, դատաքննություն կամ ովքեր նախկինում դատապարտվել են ազատազրկման՝ պատիժը կրել են երեք տարուց ոչ պակաս, ինչպես նաեւ, եթե կատարել են Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության եւ Հայաստանի Հանրապետության դատախազության հաստատած ցանկում նշված հանցագործություն:

Ում է տրամադրվում տարկետում

Պարտադիր զինվորական ծառայության զորակոչից առողջական վիճակի պատճառով տարկետում տրվում է այն անձանց, ովքեր հիվանդության պատճառով զինվորական ծառայության համար ճանաչվել են ժամանակավորապես ոչ պիտանի:

Ովքեր են ազատվում պարտադիր զինվորական ծառայությունից

- հանրապետական զորակոչային հանձնաժողովի կողմից առողջական վիճակի պատճառով զինծառայության համար ոչ պիտանի ճանաչված քաղաքացին՝ հանվելով զինվորական հաշվառումից,

- այն քաղաքացին, ում հայրը (մայրը) կամ հարազատ եղբայրը (քույրը) զոհվել (մահացել) է Հայաստանի Հանրապետության պաշտպանության կամ զինված ուժերում եւ այլ զորքերում ծառայողական պարտականություններ կատարելու ժամանակ, եւ նա այդ ընտանիքի միակ արու զավակն է,

- քաղաքացին՝ կառավարության որոշմամբ,

- մինչեւ Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունն ընդունելն օտարերկրյա պետությունների զինված ուժերում պարտադիր զինվորական ծառայություն անցած քաղաքացին,

- գիտական աստիճան (գիտության թեկնածու կամ գիտության դոկտոր) ունեցող քաղաքացին, եթե նա զբաղվում է մասնագիտական, գիտական կամ մանկավարժական գործունեությամբ: